



# ԱՐՄԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Թիւ 27589  
նոյեմբեր 24, 1981

Արժանաշնորհ  
Տ. Յուսիկ Քինյ. նշանեան  
Առժամեայ Հովհան Ս. Խաչ Եկեղեցւոյ  
Նախազահ ծխական Խորհուրդի  
Գանտառ.

Սիրելի Տէր Յուսիկ,

Ստացած ենք Հոկտեմբեր 21, 1981 թուակիր նամակ մը Ռանըլտ  
Միւլըր փաստաբանի ստորագրութեամբ, որ Սուրբ Խաչ Եկեղեցւոյ  
Վճարելիք թեմական տուրքերու կապակցութեամբ թելադրութիւն  
կ'ընէր եւ 1000 --մէկ հազար-- տոլարի փոխզիր մը ներփակած  
էր:

Թեմական Խորհուրդի Հոկտեմբեր 23 նիստին մէջ առնուած որո-  
շումին համաձայն, փաստաբանին վերադարձուցինք փոխզիրը՝ յայտ-  
նելով որ Առաջնորդարանը իր ծուխերուն հետ ուղղակի կը հաղոր-  
դակցի:

Ծխական Խորհուրդի պարտականութիւնն է հնազանդիլ Հայց. Եկե-  
ղեցւոյ կանոններուն եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի  
Կանոնադրութեան, իբրեւ թեմական իշխանութեան հրամանով կազմա-  
կերպուած համայնք մը:

Գանատական կառավարութեան հետ որեւէ օրինական հարցի մը  
առջեւ գտնուելու պարագային թեմական իշխանութիւնն է որ պիտի  
ներկայանայ իր փաստաբաններով, պաշտպանելու համար թեմի ծու-  
խերու իրաւական կացութիւնը:

Անզամ մը եւս ծեզի կը հրահանգենք որ ամբողջութեամբ վճա-  
րէք թեմական ժողովի կողմէ որոշուած եւ ծուխիդ բաժին հանուած  
թեմական տուրքը, որուն անվճար քանակը ծեր գանցառութեան պատ-  
ճառաւ բարձրացած է մինչեւ 17,080 --տասնըեսօթը հազար ութսուն--  
ամերիկեան տոլարի:

Նաեւ վերջին պատեհութիւն մը կուտանք ձեզի՝ ներկայանալու թեմական խորհուրդին, եւ նշութելու ձեր կացութիւնը:

Ուստի, կը հրահանգենք ձեզի որ Ս. Խաչ Եկեղեցւոյ ծխական խորհուրդի կողմէ երեք անժեր նշանակէք որոնք լիազօրուած ըլլան յանուն ծխական խորհուրդին պատասխանելու իրենց ուղղուելիք հարցերուն: Այս ժողովի թուական նշանակած ենք 1981 Դեկտեմբեր 18, Ուրբաթ, նիւ Պրիթըն Գրնէթիքէթի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ սրահին մէջ, ուր եւ պիտի գումարուի թեմական խորհուրդի ժողովը:

Կը ներփակենք օդանաւային ընկերութեանց երթուղարձի ժամանակացոյցը եւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ հասցէն ու հեռածայնի թիւը:

Ճար ներկայացուցիչները պէտք է իրենց հետ քերած ըլլան 17,080 --տասնընթափը հազար ութսուն-- ամերիկեան տոլարի փոխգիր մը:

Որեւէ պատճառաւ այս հանդիպումին նպատակը ծախողելու պարագային, թեմական խորհուրդը իր որոշումը պիտի առնէ հեռացնելու չոգեւոր չովիւը եւ պաշտօնանկ ընելու ծխական խորհուրդը:

Կը յուսանք որ ծխական խորհուրդի իմաստութեամբ եւ հաւատարմութեամբ կ' ենթարկուի թեմական իշխանութեան հրահանգներուն՝ ապահովելու համար խաղաղ քարզաւաճումը ծուխին:

Սիրոյ ողջունիւ



ԹՈՐԳՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՎ  
Առաջնորդ

Օրինակ՝ ծխական խորհուրդի Ատենապետին

We have reserved three seats on Friday, December 18. The schedule for the round trip tickets is presented below. Please call American Airlines before December 10, to confirm the reservations with the proper names of the three delegates.

Departs Toronto Intern. at 11:30 a.m. on American Airlines Flt. No. 351

Arrives La Guardia at 12:43 p.m. on

Departs La Guardia at 1:30 p.m. on Bar Harbour Flt. No. 1768

Arrives Bradley Airport at 2:15 p.m.  
(Hartford, Conn.)

Departs Bradley at 7:00 p.m. on US Air Flt. No. 451

Arrives Buffalo at 8:00 p.m.

Departs Buffalo at 10:15 p.m. on US Air Flt. No. 323

Arrives Toronto Int. at 10:43 p.m.

New Britain, Armenian Church of the Holy Resurrection

P.O.B. 1080, 1910 Stanley St.

New Britain, Connecticut 06050

(203) 223-7875